


ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Ցարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2, ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գարձեալ չերամապա-
հաւելանալ առիթով. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առաւօր-Ուշագարիւ.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպայի ուսանողութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Մշակ» № 61 մէջ մեծ հետաքրքրութեամբ
կարդացի Պ. Լէրիսէի պատասխանը Յ. Ա. ստո-
րագրութեամբ «Մշակ» № 45-ի մէջ տպած նա-
մակին: Ես չտապում եմ մի քանի խօսք ասել
այդ պատասխանի առիթով և յայտնենք, որ պ.
Յ. Ա. չի ներգրանջ ինձանից, որ այս քայլը ա-
նում եմ առանց նրանից թոյլտուութիւն ստացած
լինելու:

1) Պ. Յ. Ա. ասել էր սերմ վերաճելու մասին.
«գիւղացին յերաւի վեր է աճում աւելի սերմ,
քան թէ կը ներքն իրան միջոցները, բայց այդ
անում է նոյն իսկ չերամապահովեան ծաղկած
ժամանակը»: Պ. Լ. սրան պատասխանում է, խոր-
հուրդ տալով լուրջ տեղեկութիւններ հաւաքել
չերամապահովեան ծաղկած ժամանակին պահած
սերմի քանակութեան մասին այժմեան պահածի
հետ համեմատելու համար: Այս խորհուրդը զուր
կարելի է համարել, քանի որ պ. Յ. Ա. գործին
լաւ տեղեկ է: Այսօր իսկ մեզանում, Ագուլիս,
ամենքն էլ աւելի սերմ են աճում և պահում—
իրանց որդիների պակասած ժամանակը աճում են
(պատահում է և շատ թանգ), բայց և այնպէս
մինչև այժմ լաւ արդիւնք են ստացել և արօղական
սերմերից: Այս իրողութիւնը աչքի առաջ ունե-
նալով կարելի է հաստատապէս ասել, որ աւելի

սերմ վեր աճելը, քան ներքում են մէկի միջոց-
ները.—այնքան մեծ նշանակութիւն չունի, ինչ
որ վերագրում է այս հանգամանքին պ. Լ.: Հար-
կաւ, աւելի քիչ պահելով կը ստացվի աւելի լաւ
արդիւնք.—բայց շատ վերաճելը կորստաբեր հե-
տեանքներ չունի արդիւնքի համար և ապա չերա-
մապահովեան ընկնելու պատճառը դա չէ եղած և
զորանով չէ որ կարելի լինի վերականգնելու և
հասցնել կովկասի չերամապահովեան ծաղկած
դրութեան: Ամենաառաջին պայմանն է այդ իրա-
գործելու՝ առողջ սերմ ունենալը:

Պ. Լ., իր յիշեալ խորհուրդից յետ, սկսում է ինքն
իրան ի զուր տեղից կասկածել: Այս եւս ի զուր
տեղից, որովհետեւ պ. Յ. Ա. չէր բարձրացրել այդ
հարցերից և ոչ մէկը՝ ոչ այն թէ գիւղացիք 2—3
ֆ. սերմի համար ընդարձակ որդնանոցներ ունեն
թէ ոչ, ոչ այն թէ գիւղացիք այդ քանակութեան
համար հարկաւոր թէ մարդիկ և թէ տերեւ ունեն
թէ ոչ, և ոչ էլ պաշտպանում էր գիւղացիներին
չափաւ սերմ վեր աճելու համար: Պ. Յ. Ա. չէր
պաշտպանում—ոչ այլ միմիայն բացատրում էր
այդ երևոյթի պատճառը, մասնաւոր չէր անելով ան-
յարմար ընտելանքների, զանազան վնասակար
միջոցներից պաշտպանելու (Ագուլիսում և միջիւ-
նը շատ վնաս է տալիս) անդիտութեան կամ ան-
կարելութեան վրա և այլն: Եւ ահա այդ միջոցա-
ների վրա խօսելիս պ. Լ. բացատրում է թէ Եւ-
րոպայում ինչ հարկներ են բանեցնում դրանց
միջոցից դեռ մնալու համար: Հաւատարմութիւն
պ. Լ. որ այդ բոլոր միջոցները պ. Յ. Ա. ծա-
նոթ են, իսկ եթէ նա այդ բացատրութիւնները
անում է գիւղացիների համար, նորա եւս չնորհա-
կալ կը լինեն պարօնից (ի հարկէ չիմացողները
միայն): Սակայն շատ պիտի զարմանան ամենքն
էլ պ. Լ.—ի հետեւեալ խորհուրդը կարդալով. «եթէ
չերամապահովեան այնքան խելացի չեն, որ կարող
լինեն այդ տեսանելի կենդանիների առաջն առ-
նել, այն ժամանակ աւելի լաւ կը լինէր, որ նը-
րանք պարսպէին ոչխարաբուծութեամբ և խոզա-

պահութեամբ»: Շատ ցաւալի է, որ պ. Լէրիսէ
թողած լինելով իր հայրենիքը, մոռացել է իր
հայրենակիցների օրինակելի և աշխարհածանօթ
քաղաքավարութիւնը: Խոզը և խոզապահութիւնը
շատ լաւ բաներ են, բայց քաղաքավարի լինելը
ամենայն մէկի պարտաւորութիւնն է: Եթէ այժմ
առիթ էր որոնում ծաղրելու կովկասի չերամա-
պահովեան, ապա ինչո՞ւ տասնեակ տարիներ սրա-
նից առաջ ձեր հայրենակիցները գալիս էին և
եկել էին մեզանում չերամապահովեան սովորելու
և նրանից օգտվելու:

2) Մի ամբողջ սինակ պ. Լ. նուիրում է
սերմ պատրաստելուն: Ես շատ որոնեցի և ոչինչ
չը գտայ դրան առիթ տալու պ. Յ. Ա. նամակում:
Անուրանալի է, որ չը գիտցած գործ կատարե-
լը օգուտ չի բերի—այլ վնաս (և պ. Լ. իզուր է
մէջ բերում սորա մասին պ. Մայոյի վկայութիւ-
նը—ասում եմ իզուր, որովհետեւ յիշեալ ճշմար-
տութիւնը անհերք է և անհերքելի): Օրինակ, ե-
թէ շահասէր ֆրանսիացիք սերմ են հանում և
ցէլիւլերի անոնով վաճառում կովկասում, սորա
հետեւեալ այն կը լինի, որ աղքատ կովկասի չե-
րամապահները կը ստանան կրկնապատիկ և եռա-
պատիկ վնաս,—ժամանակի փողի և աշխատանքի
կորուստ *): Իսկ մեր կովկասցիք այնքան խելո՞ւ
են, որ ցէլիւլէր անունը լսելով՝ կարծում է թէ
այդ սերմը անշուշտ Պատեօրի ձեռքով է անցած
և քննուած,—նրանց խելքը բնաւ չէ կտրում, թէ
կարող է վատ (պարզ ասելով՝ կեղծ) ցէլիւլէր
լինել:

3) Այնուհետեւ պ. Լ. վերադառնում է որոշելու
ժամանակն և խաղաղութեան բոժոժի զանազանու-
թիւնը խտակութեան կողմից: Պ. Յ. Ա. իր յո-
գաւածում զանազան տեղեկութիւններ է առաջ
բերում ժամանակն սերմերի մասին և հաստա-
տապէս ասում թէ՝ «ժամանակն այնքան դի-

*) Այս օրինակը չէ հակասում յիշած ճշմար-
տութեանը, չը նայած, որ ֆրանսիացիք օգտվում
են ի վնաս կովկասցիներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ՍՊԱՆԻԱ

Յառաջ բերեցէ պատեղ Carrido-ի խօսքերը
Սպանիայի մասին իր «Ժամանակակից Սպանիա»
վերնագրով գրքից: Նրա ասելով Սպանիայում
համալսարանները վաղուց արդէն գտնվում են կոր-
ծանվելու վիճակի մէջ, վաղուց արդէն ժողովրդի մէջ
կարծիք է առաջացել, թէ դրանք ամեն տեսակ
անբարոյականութեան կենտրոններն են: Ամբողջ
ուսանողութիւնը մի խումբ է կազմում և գտնվում
է աւելի վաղերի, արեւմտեան, քան թէ մարմնա-
ւոր իշխանութեան հսկողութեան տակ: Աղքատ
ուսանողները ստանում են իրանց կերակուրը
վանքերից: Արձակուրդներին ուսանողները խմու-
լին ճանապարհորդութիւն են անում գիւղէ գիւղ
զանազան երաժշտական գործիքներ հետեւին ա-
ռած և սկսում են ժողովրդին երգել փող հաւա-
քելու նպատակով և ժողովուրդը իմանալով, որ
այս աղքատները խմբից պիտի ժամանակակից
բիշկներ, իրաւաբաններ, վարչութեան պաշ-
տօնեաները զուրս գան, մեծաւ ուրախութեամբ
ընդունում է. շատ անգամ պատահում են այդ
խմբերի մէջ նաև ամենահարուստ ընտանիքներից
երիտասարդներ: Մինչև 60 թուակ. սկիզբները դա-
ստութեան համար ծառայում էին միայն միջին
դասերի գրքերը. ոչ մի նոր գիրք բնական գիտու-
թիւնների մասին չէիք կարող գտնել, հէնց այժմ
ևս այդպիսի գրքերը շատ սակաւթիւ են:

Torres ասում է. «5 տարի արդէն համալսա-
րանում ուսանում էի, երբ իմացայ, որ մաթեմա-
տիկական գիտութիւնների կան. մարդ վախճում էր

այդ գիտութիւններից, որովհետեւ դրանց կրօնի և
եկեղեցու համար վնասակար էին համարում: Հէնց
այդ է պատճառը, որ ժողովուրդը մինչև այսօր
տղիտութեան մէջ է մնացել, սակայն մեր միւ-
թարութիւնը միայն նրանումն է, որ ուսանողու-
թիւնը բաւականին հմուտ է լատիներէն լեզուի,
եկեղեցական պատմութեան և հռոմէական իրա-
ւաբանութեան մէջ»:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

1859 թուակ. ռուսական վեց համալսարաննե-
րում կար 5555 ուսանող, որոնցից գտնվում էին
68% աղետականներ, 9% հոգեբանականների,
7% վաճառականական, 12% քաղաքացիների և
0,6% գիւղացիների դասակարգերից: Իսկ եթէ տա-
րիքի դասակարգերը, կը գտնենք որ 10% —16—
18 տարեկան էին, 42% 18 մինչև 21 տարեկ.,
39%—21—25 տարեկ. և 7% 25 տարեց աւելի:
Իրանց սկզբնական կրթութիւնն ստացել են լի-
ցէօններում և միւս բարձրագոյն ուսումնարան-
ներում 12% զինվորացիներում 57%, հոգեւոր սե-
մանարարներում 4%, զանազան միջնակարգ ու-
սումնարաններում 4%, ընտանեկան կրթութիւն
ստացողներն են 21%:

Ուսանողների թիւը հասնում էր 1872 թ. 7251
և 172 ազատ ունկնդիրների, դրանցից 3120 պատ-
կանում էին իրաւաբանական ֆակուլտետներին,
և 1922 բժշկական ֆակուլտետին, իսկ մնացած
25% միւս ֆակուլտետներին:

Ուսման վճարն է Ս. Պետերբուրգում և Մոսկ-
վայում տարեկան 50 ր., իսկ միւս համալսարան-
ներում 40 ր.: Համալսարանական ծերակոյտն
(սենատ) իրաւունք ունի չունելու ուսանողներից
վճարի կէտը առնել կամ վճարից բոլորովին ազա-
տել:

Ռուսաստանում ամենայայտնի համալսարանն է
Ս. Պետերբուրգիւնը, ուր ուսանում են ազնուա-
կանները և բարձր պաշտօնեաների որդիքը. Պե-

տերբուրգի համալսարանն ունի լաւ հմուտ գրողներ
ընտելութեան և իրաւաբանութեան մէջ: Մոս-
կվան նշանաւոր է իր բժշկականութեամբ և իրա-
ւաբանութեամբ, Վիելիսը—պատմութեամբ և առ-
տաւածաբանութեամբ, Օդեսայինը՝ յունարէն լե-
զուի և մաթեմատիկայի մէջ:

Հարեցողութիւնը ուսանողների մէջ, որ Նիկո-
լայոս Վայսի ժամանակ ծաղկած էր, այժմ գրե-
թէ բոլորովին վերջացել է: Ուսանողութիւնն ընդ-
հանրապէս աշխատասէր է և եռանդով պարագ-
վում է ընկերացանութեամբ. նա գիտէ Ռուսիայի
պատմութիւնը և գրականութիւնը և մասնակից է
ժամանակակից կուլտուրական առաջադիմական
չարժողութեան: Այլադից կրակաւորութիւնն ևս նը-
րան անձնօթ չէ, զվաւորապէս այն գրութեանը,
որոնք քաղաքական և տնտեսական հարցերով են
զբաղված, սակայն նա բոլորովին գաղափար չու-
նի փիլիսոփայական գիտութիւններից, նրա կար-
ծիքով այդ վերջինը է մի երկրորդական բան,
քանի որ ընկերական թշուառութիւնները ժողո-
ւրդի մէջ իշխում են. կենցիկ այս տեսակ աշ-
խարհայեցողութեամբ ռուս ուսանողը ցոյց է տալիս
ոչնչականութեան մէջ: Նա ասում էր համոզմուն-
քով կենցիկ վայելուչ եղանակը. գնում էր մադե-
րը չը սանդղած, չը լուսացված, որովհետեւ դա
անցողական բան է: Սակայն, բարեբաղդաբար, ու-
սանողութեան այդ հոգեկան հիւանդութիւնը անցաւ
և այսօր շատ քիչ մեղմանալիս կը գտնէր ուսա-
նողութեան մէջ: Ընտանեկան շրջանում ուսանո-
ղութիւնը մեծ դեր է խաղում, ուրիշ խօսքով նա
չըլքանի ծաղիկն է համարվում: Ուսողութեան ար-
ժանի է աւելի այն դէպքը, թէ ինչպէս նա իդա-
կան սեռի վրա ազդել է ուղում. իւրաքանչիւր
իր պարտքն է համարում, որքան կարելի է շատ
օրիորդներ զարգացնել, ծանօթացնելով նրանց ժա-
մանակակից գաղափարների հետ:

Ռ. ուսանողութեան կենցիկը ներկայացնում է
մի խառնուրդ գերմանական և ֆրանսիական

մացկուն գտնվեցաւ համեմատելով պարսկականի
և իտալականի հետ, որ ոչ թէ միայն միմիայն
10—15 ֆ. թաց բոժոժ տուաւ, այլ նրանից մե-
զանում հանած սերմը միշտ 5—10 ֆ. բերք տա-
լիս է: Սրանից չը պէտք է եզրակացնել թէ պ.
Յ. Ա. պաշտպանում է ժամանականը իտալականի
կամ ֆրանսիականի դէմ—ոչ: Նա միայն նկատո-
ղութեան է աւանդում մի իրողութիւն, թէ յայտնի
տեղերում (Նիկոլոս գաւառում և այլն, իսկ Ա-
գուլիս համարեա թէ ոչ պարսկականն են պա-
հում և ոչ էլ ժամանականը) մի քանի հանգա-
մանքների շնորհիւ (թէ այն որ գիւղացիք գուցէ
վատ ֆրանսիական սերմ են ստանում, թէ այն
որ նոցա ընտելանքները անյարմար են, թէ այն
որ նոցա աղքատ են և չեն կարողանում լաւ
ֆրանսիական սերմ ձեռք բերել և այլն), գիւղա-
ցիք աւելի օգտվում են ժամանականից, քան իտա-
լականից: Գալով բոժոժների խտակութեանը, պ.
Յ. Ա. չէր գերադասել ժամանականը ֆրանսիա-
կանից. ահա նրա խօսքերը՝ «կանաչ եթէ լաւ
է պահված, այնքան ստոր չէ արժէքով և այլն»:
Ոչ գերազանցութիւն է տուել, ոչ էլ հաւասարա-
ցրել ֆրանսիականին:

4) Պ. Լ. դարձեալ անդում է ճանապարհների եր-
կու կողմը թիթենիներ տնկելու համար և բացական-
չում. «արդեւ այդ պարօնները չեն տեսել Ֆը-
րանսիայի հարաւային չերամապահական գաւառ-
ներում ճանապարհորդելիս, բոլոր ճանապարհի
2 կողմերն էլ զարդարված թիթենիներով»: Ես
հէնց անցեալ տարի առիթ եմ ունեցել ճանա-
պարհորդելու յիշեալ գաւառներում և խոստովա-
նում եմ որ այնպէս, ինչ կերպ որ հաստատում է
պ. Լ., թիթենիներ բոլոր ճանապարհների երկարու-
թեամբ զուգահեռաբար տնկած չը կան,—պա-
տահում են—բայց ոչ թէ բոլոր ճանապարհների
վրա: Սակայն երբ ճանապարհը անցնում է այդի-
ների միջով կամ մօտով և եթէ այդ այգիները
թիթենոցներ են անշուշտ թիթենիները գնում
հասնում են մինչև ճանապարհը,—բայց դա չէ

կենցիկից. մինչև 1878 թուակներ բացառութիւն
էին կաղմում կիւնիլ համալսարանի ուսանողները,
որոնց կենցիկը քիչ թէ շատ ղիւնտրանոցի կենցիկ
էր նմանում:

Համալսարանական ուսանողների մէջ բարոյա-
կան կապը շատ թույլ է: Գրեթէ 19 տարի սրա-
նից առաջ գոյութիւն ունէր ուսանողական պաշտօ-
նական հագուստը, որ այժմ վերստին մոցրած է:
Պաշտօնական հագուստը այն նշանակութիւնը ունի
ուսանողների համար, որ նրանց մի տեսակ դիւ-
ցիպլինայի է ենթարկում. հագուստը ստիպում է
նոցա իրանց վայելուչ կերպիւ պահպանել: Միւս
կողմից աղքատ ուսանողներին իւրաքանչիւր ըն-
տանեկան շրջանը մատչելի է շինում, որովհետեւ
պաշտօնական հագուստ ունենալով, այլ ևս պէտք
չեն զգում ուրիշ, այլ և այլ դէպքերին յարմար
հանդերձներին:

Ուսանողութեան մեծ մասը աղքատ դրութեան
մէջ է և ստանում է վարչութիւնից մի փոքրիկ
գումար իրանց գոյութիւնն ապահովելու հա-
մար, սակայն ընդհանուր հիմնարկութիւններ ճա-
չելու, ընակվելու համար ոչ մի տեղ չէք գտնի,
միայն Մոսկվայում կայ մի ընդհանուր ուսանողա-
կան ճաշարան, ուր ուսանողները գրեթէ 15 կո-
պէկով ճաշ են ստանում: Այդ պատիւի վարչու-
թիւնը գտնվում է ուսանողների ձեռքին: Ես ես
մի քանի անգամ պատիւ ունեցայ Մոսկվայում
այդ պատիւով ճաշելու. պիտի խոստովանվել
ճաշն իր գնի համաձայն շատ լաւ և առողջարար
է: Ընկերական կենցիկը ուսանողների մէջ բաւա-
կանին զարգացած է, բայց ընկերութիւններ չու-
նեն: Նիկոլայոս Վայսի ժամանակ շատ յաճախ
էր պատահում զինկոյններ և ուսանողների մէջ
մշտնապարտութիւններ, սակայն այժմ գրեթէ բոլո-
րովին վերացել է:

Ուրիշ մի տիպ է ներկայացնում Գորպատի ու-
սանողութիւնը. նա Ռուսաստանի միւս համա-
լսարանների ուսանողութեան հետ նմանութիւն

զառնում պ. Լ. ասածը: Նմանապէս Ռուսաստանի համար չէ կարելի ասել թէ ճանապարհների երկու կողմը դիմամբ ցորեն են վարում: Օրդուաթի, Ագուլիսի ճանապարհների վրա բնա չէ կարելի մի բան տնկել չրի կատարեալ պակասութեան և անձրևի սակաւութեան պատճառով:

Մի և նոյն պատասխանի մէջ կայ այսպիսի միտք «բոլոր մանարան ունեցողները պէտք է... մետաքսի... գործարանները հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնեն»: Գեղեցիկ միտք է: սակայն այս օրուայ համար անգործնական և անիրագործելի: Ինչքան ինձ յայտնի է նոյն իսկ պ. Լ.-ի հայրենիքում երկրի դրութիւնը իր յիշեալ մտքի համեմատ չէ և մանարան ունեցողները յարաբերութեան մէջ են վաճառականների հետ:

5) Գալով մաքսին, ես կատարելապէս համակարծիք եմ պ. Յ. Ա.-ին: Հաստատցում եմ պ. Լ. որ պ. Յ. Ա. սեփական շահը չէ ունեցել աչքի առաջ իրան պատասխանելով: Եւ դիցուք թէ իր շահի համար գրած լինի— միթէ պ. Լ. կարծում է թէ դա օտարների առանձնահատկութիւն է: Միթէ պ. Լ. աշխատելով 20 տարի Կովկասի մէջ իր շահը չէ աչքի առաջ ունեցել, այլ միակ նպատակ— հանդիսանալ իսկական բարերար Կովկասի: Դա զիտար է այս վերջինին հաւատալ:

Ես ասում եմ արտահանող ապրանքի վրա մաքս նշանակելը ոչինչ օգուտ, բացի մեծացնելի ունենալ: Այս օրուայ օրս միայն այն արդիւնքներն են արտահանում, որոնք Ռուսաստանի մէջ չեն գնահատուում գոհացուցիչ կերպով կամ անպէտք են: Աւելի հասկանալի կը լինէր եթէ պ. Լ. առաջարկէր աւելացնել, բարձրացնել ներմուծվող մետաքսի մաքսը: Այդ կարող է ի թիւս այլոց դրաքայանալս նպատակը չերամարտութեան զարգացմանը Կովկասում: Սակայն պ. Լ. այդ չէ ասում: Ես ցանկանում է դուրս բերել իր նախագծերը և բարերար հանդիսանալ մեր երկրին: Կառավարութեանը, եթէ նա հաւանութիւն տար պ. Լ. նախագծերին՝ անհրաժեշտ է դրամական միջոց և ահա պ. Լ. հարում է նոր մաքս արտահանվող ապրանքի:

Ես կընդունեմ պ. Յ. Ա.-ի հետ թէ հարկաւոր է ուրիշ նախագիծ քան պ. Լ.-ի առաջարկածը ամբողջ Կովկասի չերամարտութիւնը և մետաքսագործութիւնը վերականգնելու և զարգացնելու համար (զի սոցա մասին պէտք միաժամանակ մտածել):

Մի նկատողութիւն իմ կողմից պ. Լ.-ին: Եթէ չեմ սխալվում ապրիլի 26-ի Գիւղատնտեսական ընկերութեան ժողովում, վիճաբանութիւնների ժամանակ պ. Միրիմանով նկատեց թէ պ. Լ.-ի

չունի, նա բոլորովին չէ զբաղվել և չէ զբաղվում քաղաքականութեամբ: Ընկերական կեանքը նրա մէջ աւելի զարգացած է և ուսանողները մեծ մասամբ դերմանացիներ լինելով, գերմանական ուսանողութեան են նման:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիան ունի 21 համալսարան, որոնց մէջ ուսանում են 25 հազարի չափ ուսանողներ: Գերմանական համալսարանի կանոնադրութիւնն ամենաազատամտի բնուրոյթի ունի. թէ ուսուցչապետը և թէ ուսանողը ազատ են իրանց աւարկանքի ընտրութեան մէջ, առաջինը իր մասնագիտական դասախոսութիւնների ընտրութեան, երկրորդը դասախոսութիւնների այցելութեան վերաբերմամբ, սակայն չը նայելով այդ ազատ դրութեան, նրանք պարզապէս ազատութիւն չեն դնում չեն իրանց, ճէնց այդ է պատճառը, որ Գերմանիայի ուսանողութիւնը եւրոպական ուսանողութիւններից վեր է. ուր կարելի է գտնել այնքան ուսուցչապետների և ուսանողների թիւ, եթէ ոչ Գերմանիայում, որ ուսանողութիւնն աւելի եռանդ ունի ուսանելու և գիտութեան մէջ առաջ գնալու համար, եթէ ոչ գերմանական: Ուսուցչապետի եռանդն ուսուցանելու մէջ երեւում է և այն դէպքում, որ նա մինչև անդամ խորին ծերութեան հասած՝ չէ ուղում իր ամբիջից հեռանալ (Գրեյլը 85 տարեկ. հասակի անած է և 65 տարեկ. է, որ Լայպցիգի համալսարանում աշխատում է), իսկ միւս կողմից ուսանողին, որի մէջ նկատելի է անպագ ձգտումն դէպի գիտութիւն: Գերմանական ուսանողը ոչ թէ միայն ուսանում է իր հայն ապագայում հայրնային

*) Ինչ որ Գերմանիայի մասին ենք ասում, նորը ընդունելի և չվիճարկական ու աստիճանական ուսանողների մասին, որոնք ոչ մի բանով չեն զանազանվում գերմանականներից:

Նովորու դաւառում բաժանած, սերմերը վարձառն կանական սերմեր են եղած: Մի օրոչ պատասխան չեմ մտաբերում լսած լինելու պ. Լ.-ի կողմից: Յայտնի է որ վաճառականական սերմերը շատ լաւ չեն և լաւ բերք տալ չեն կարող և չեն էլ տալիս: Ինձ ևս յայտնի էր թէ պ. Լ.-ի սերմերը լաւ բերք չեն տալիս: Պ. Յ. Ա. վկայում է թէ որքան իրան յայտնի է, 84 թվին պ. Լ.-ի Ագուլիսում բաժանած սերմը ոչինչ բերք չէ տուել: Այս վերականգնում եմ թէ մինչև այժմ պ. Լ.-ի բաժանած սերմերը վաճառականական են եղած: Արդ՝ ոչ միայն չերամարտութիւնը վերականգնելու համար, այլ միմիայն մի լաւ բերք ստանալու համար պէտք է անպատճառ գիւղացիներին— իսկական, լաւ ցեղերէ բաժանել:

Ես թողնում եմ պ. Յ. Ա.-ին, եթէ նա հարկ կը տեսնի— լրացնել իմ պատասխանս: Թիֆլիս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր ստացանք ԵՄՄԱՐՆԻՅ հետեւեալ մասնաւոր հեռագիրը Կալիպոլիսի ձեռնագրութեան մասին: «Չեռնադոլեցան Կալիպոլիսի թիւրքաց վարդապետները չորս հոգի: Մաղաբա, Գարեհի, Ստեփան, և Յուսէֆ: Եւ միւսներն միաբանութիւնից՝ Մամբրէ, Սարգիս, Արիստակէս, Կարապետ (Տէր-Գալստեան) և Կարապետ (Ավագեան): Սրանցից չորս եղել են հոգեւորական պատգամաւորներ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ:»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ գոյութիւն ունի այժմ «Ներկայութիւն և նկարագրական դրամներ սիրողների» մի շրջան: Ինչպէս հաջորդում են ուսուցիչները այդ սիրողները արդէն երեք ճանապարհորդութիւն են արել և այդ ճանապարհորդութիւններին մասնակցել են 15 կանայք: Բնութիւնից վերցրած տեսարանները նկարեցոյ յետոյ, սիրողները կազմում են դրոշմներ, որոնց միջոցին վիճում և խօսում են գեղարուեստական հարցերի մասին: Այդպիսի և ուրիշ, աւելի լայն ներպատասխանող դրամներն են ճանապարհորդութիւնները եւրոպական երկրներում վարդէ և արդէն որ սովորական բաներ են համարվում:

Ամիս 4-ին Թիֆլիսի ընտանական դպրոցի եօթներորդ դաստանն մի վրացի աշակերտ, Բազախտուով, որ մի քանի օրից յետոյ պիտի աւարտէ իր ուսման ընթացքը, կարճատև հիւանդ

թելու համար, այլ նա իր ուսանողութեան ժամանակ սկսածը քաղաքացում չարոնակում է, այն եւ ուսանող երիտասարդը, որը բարձր զարգացմանը համար մեռնել է ուղում, կեանքի մէջ մտնելով ոչ թէ սառչում, անհնչում է, որը յաճախ ուսանողների մէջ է պատահում, այլ կեանքի փոթորիկների աղեղնութեամբ իր աշխարհայեցողք փոփոխելով, աւելի զարգացնելով, սկսում է այդ բարձր ինտելեկտական զարգացման իրականութեան մէջ գործ դնել: Գէնց այդ է պատճառը, որ նախկին ուսանողը այսօր փայլում է ընդհանրական շրջանների մէջ, իր նշանաբանը ընտրելով Միլտոնի խօսքերը. «Եթէ ուղում եք ձեռք մարտ կերպիւ ժամանակակից թշուառութիւնների առաջն առնել, մտածե՛ք՝ մեկը ինչ եղեւ և ուրիշը՝ ինչ հոգեւոր կոչումն ստանալով չէ մոռում միայն և կեանքի փոթորիկների դէմ, իր բոլոր ոյժը թափում է ժողովրդի օգուտը և դրութիւնը ճանաչելու և բարեկամացնելու, խօսքի բուն նշանակութեամբ հոգեւոր հովիւ լինելու: Գերմանական ուսանողը չէ ուսակականների նման Էնցել-լոպելիտ, չը նայելով որ նրան տուած է կատարեալ ազատութիւն որ դասախոսութիւնը լինի լսելու և նա էլ այս դէպքում չէզոք չէ մընում: Գերմանական ուսանողներ կը գտնեն, որ քանի իրան մասնագիտութիւնից ուրիշ գիտութիւններ են ևս լսում, իրաւաբան կը տեսնեն փիլիսոփայութեան պատմութիւն լսելիս, աստուածաբանը՝ մանկավարժութիւն և այլն: Եւ չը նայելով նրա ձգտման դէպի ընդհանուր զարգացումը, նա Էնցելլոպելիտ չէ. եթէ դու նրան մի որ և իցէ նիւթի մասին բացատրութիւն խնդրես, որը իր մասնագիտութիւնը չէ, նա կը պատասխանէ. «Նեւրէք պարոն, դու իմ մասնագիտութեան չէ վերաբերում և հետեւաբար իմ կարծիքը ձեռք համար բաւականացուցիչ չի լինիլ, չը նայելով որ նա այդ

դրութիւնից ցրտի վախճանվեցաւ: Հանգուցեալի հայր մի աղքատ գիւղացի, տարիներով իր վերջին կուպկեները տալիս էր որդու ուսման վրա, սպասելով թէ իր որդու և թէ իր համար մի սպաժառ ապագայ: Հանգուցեալը ընդունակ մաթեմատիկոս էր և ասում են զո՞ գնաց իրան շրջապատող աննպատակ նիւթական հանդամանքներին:

Ռուսաց «Книжки Недѣли» ամսագրի ներկայ թիւի տետրակներում տպւում է այժմ Ն. Դ. Նիկիտինի երկար և շատ հետաքրքիր «Въ повомъ краѣ» վերնագրով բովանդակ, որ մի բաւական համարձակ քննադատութիւն է ուսուցչական պատմական գործը դրութեան եղանակի նոր-նուաճած երկրներում: Բովանդակէ զուրկ է գեղարուեստական յատկութիւններից, բայց իր հետաքրքիր բովանդակութեան և հարուստ նիւթի պատճառով յաւիշտակութեամբ է կարդացվում:

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները շատ պարզ միջոց են գտել դպրոցի ելման տեղի հաշիւները կանոնաւորելու և դէֆիցիտ չունենալու համար: Փոխանակ հոգաբարձու, շահը գործ դնելու որ դպրոցի կալուածները կարգի ընկնեն, կանոնաւորվեն և աւելի արդիւնք տան, որով կարելի լինի դպրոցի տնտեսական դրութիւնը ապահովել, փոխանակ աւելի խիտ կոնտրոլ մտցնելու դպրոցի, այնպէս էլ ահազին տարեկան մօտ 70 հազար ռուբլու եկամուտը գործադրութեան և ծախսերի մէջ, հոգաբարձուները փակել են տալիս դպրոցի եօթներորդ դաստանը և վճում են փակել երեք պատրաստականներ և այդ ձեով են ուղում հաւասարակշռութիւն պահպանել ելքի և մուտքի մէջ: Մեզ չի դարձանք եթէ վաղը իրանց հոգաբարձական նիւտերից մինում նոյն հոգաբարձուները կառավարիկներ դպրոցի ծրագրից դուրս գցել՝ բնագիտութիւնը, ֆիզիկան, բիոլոգիան, ընդհանուր պատմութիւնը և այլն, իբրև երկրորդական համար, որպէս զի աւելի էլ փոքր խնայեն և զուր ծախս չանեն այդ տեսակ աւելորդ աւարկանքի համար ուսուցիչներ վարձելու...

ՍՈՒՐԱՄԻ անցի շինութեան խնդիրը ինչպէս, հաջորդում է «Нов. Время» լրագիրը, վճում է վերջնականապէս խնդիրը քննվեցաւ պետական խորհրդում մայիսի 24-ին: Սկզբնական ծախսերի համար վճում է տալ մի միլիոն ռուբլի: Այդ գումարից 700,000 կը դրուի թաղաւորական կառավարութեան կարգադրութեան ներքոյ, որի հսկողութեան տակ պիտի շինվի չորս վերստ եր-

հազար անդամ կարգացած ու լսած է, բայց նա հարցաւոր է, նա ուղում է լսել և հետեւանքներն իմանալ, իսկ եթէ դու մի ուսուցիչ իրան մասնագիտութեան չը վերաբերեալ խնդր առաջարկես, առանց խնդրի խորքերը մտնելու կը դատէ և եղբակցութիւններ կանի:

Ընթերցող, գուցէ կասես թէ ես միայն լաւ կողմերն իմ յիշում, աչքից թողնելով վատը, բայց դիտես որ ամեն բանի մէջ բացառութիւն կայ, չը կայ մի դպրութիւն, մի երկր, որը իր բացառութիւնները չունենայ, նոյն էլ վերաբերում է գերմանական ուսանողութեան, այո, ևս չեմ ուրանում այդ, սակայն իմացել, որ լաւ կողմերն աւելի ուժեղ լինելով, նսեմանում են բացառութիւնները:

Գերմանական ուսանողութեան մէջ ընկերական ոգին վերին աստիճանի զարգացման է հասած, որը դու ոչ Ֆրանսիայում, ոչ Հոլանդիայում և ոչ այլ տեղ չես գտնի, նոյն իսկ այդ յիշած աղքատ ուսանողներն այժմ են սկսել, գերմանացիներին անհաշիւ, ընկերական կեանքն իրանց մէջ մտցնել: Գրան ապացոյց թող լինեն այն բաղմամբ ընկերութիւնները, որոնք գտնվում են իւրապէս համալսարանական քաղաքում (միայն Լայպցիգի ուսանողութիւնն ունի 110 ընկերութիւններ):

Ընկերութիւնները բաժանվում են հետեւեալ դասակարգերի. դիտական, երաժշտական, զուարճական և մենամարտական: Գիտական կամ վերաբերում է գիտական բոլոր ճիւղերին, կամ ծառայում է մի օրոշ ճիւղի, օրինակ, փիլիսոփայութեան, աստուածաբանութեան, մանկավարժութեան և այլն: Երաժշտական պարապում է միայն երաժշտութեամբ: Զուարճական ընկերութիւններն ուրախ ժամեր են անցկացնում, առանց հոգեկան պարապմունքի: Եւ 4-րդ մենամարտականը, որի անդամները միայն մենամարտութեամբ

կարողեան տուննել և 13 վերստ էլ ճանապարհ: Մնացած 300,000 կը տրուի անդրկովկասեան երկրաշուկայ վարչութեանը, որը կը կառուցանէ ճանապարհի շինութեան մի մասը: Ամբողջ ծախքը Սուրամի անցքի շինութեան համար կը լինի 10 միլիոն:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են որ պետական խորհրդի կողմից վերջնականապէս ընդունվեցաւ գործարանների բանուորների և գիւղական մշակների օրէնքին վերաբերեալ նախագիծը: Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն:

Ամիս 6-ին, ինչպէս մեզ պատմում են, երեկոյան ժամի 9-ին, մի վրացի պատկաճ կին, Թիֆլիսի Միքայէլեան կամուրջից նետվեցաւ Կուր գետը և խեղդվեցաւ: Ինքնասպանութեան պատճառը դեռ յայտնի չէ:

Թէհրանից հեռագրում են «Нов. Время» լրագրին, որ պարսից Շահը շնորհեց իշխան Դիւրուզով-Կորսակովին իր պատկերը ադամանդներով զարդարած: Այդ պատկերը յանձնվեցաւ գերեզման Դիւրուզովին հասցնելու ըստ պատկանելոյն:

Ամերիկայի ներկայացուցիչ Վինդսոն, ինչպէս հեռագրում են Թէհրանից «Нов. Вр.» լրագրին, պայմանաւորվեց պարսից կառավարութեան հետ երկաթուղու գիծ անցկացնել Թէհրանից մինչև Բուշիր, և Թէհրանից մինչև Մեհրէ մի քանի ճիւղերով: Վինդսոն Պետերբուրգ է գնում պայմանաւորվելու, որ բոլոր հարկաւոր միջոցները Անդրկովկասեան երկաթուղով հասցնվեն Մեհրէ:

«Մշակի» 44 համարում մեք հաղորդեցինք որ Գանձակի նահանգում օտար վաճառականները մեծ քանակութեամբ հաւաքում են մատուցակ (բիւս, réglise, соляковый корень) կուրած բոլոր և ուղարկում են արտասահման: Այդ բոլոր քաղցր համ ունի, դրանից շատ կայ և Արդանուշի կողմերը, որտեղ կուրում է մի անպաւլի, և գործ է դրվում իբրև դեղ հազի և կրծքացակի դէմ աջի՝ «Русск. Курьеръ» լրագիրը լսում է որ Գանձակի նահանգում օտար վաճառականները կազմում են մի ընկերութիւն այդ բոլոր հաւաքելու և արտահանելու համար: Գրա հետ միասին, ինչպէս հաղորդում է լրագիրը, Օյլի կայարանի մօտ ընկերութիւնը շինում է մամուլ այդ բոլոր արմատները քամելու համար:

ՇՈՒԱՎԷՐԻՅ մեզ գրում են հետեւեալը: «Հեռագրատունը արդէն պատրաստ է մեզ մօտ և

են պարապում, որպէս զի պատահած դէպքում մենամարտեն, իրանց վերաւորված պատիւը վերականգնելու համար: Թէ և մենամարտութիւնն ընդհանրապէս գերմանական բոլոր թաղաւորութիւնների մէջ, բացի Պորտսայից, արդեւ լսած է, բայց կամ ծածուկ են կատարում, առանց ուսուցչականութեան իմացնելու, կամ ուղեւորվում են Պորտսայ և աղատ մենամարտում: Մենամարտութիւնը կատարվում է ոչ ատրճանակով, այլ սրով և շատ սակաւ է պատահում մենամարտողների մէջ մեռնողներ: Ահա այս եղանակով է մենամարտութիւնը տեղի ունենում. ուսանողն իրան վերաւորված համարելով, տալիս է իր հակակապիտիւն իր այցեւորման և հրաւիրում է մենամարտութեան, երկու կողմից ևս ընտրվում են սեկունդանտներ, որոնք պիտի պատրաստ լինեն իրանց գոհելու կարող ու կանոն պահպանելու համար: Չէքք ընտրվելու յանձնվում է պահանջողին և որոշած ժամանակին հեռանում են մի խուլ տեղ: Մենամարտութեան միջոցին հետեւեալ պայմանները պիտի ճիշտ կատարել. աչքերը կույտ ափնոցներ անցկացնել, պարանոցը ծածկած ունենալ և հաւանականորէ գլխին միայն խիւր: Ծիծաղալարժ է այն դէպքը մենամարտողների մէջ, որ մենամարտութիւնն վերջանալուն պէս գնում են միասին զարեջուր խմելու, ուրախ ժամեր անցնելու համար: Մենամարտութիւնը գերմանացի ուսանողների մէջ մի տեսակ քրոնիկական ախտ է դարձել և (զարմանալի չէ, որ Պորտսայի վարչութիւնը չէ արգելում մենամարտութիւնը) քանի գնում է աւելի տարածվում է, փորձի անցնել համալսարանական քաղաքների նշանաւոր փողոցների միջով, իւրաքանչիւր քաղաքիօրում կը պատահես ուսանողների, որոնց երեւներին վէրքերի հետքեր են մնացել, մէկի քիթը կարծես թէ առաջ կարված է եղել և այժմ կրկին լաւացել է, միւսը՝ ձակաթի, երեսի վրա գծեր կը տեսնես:

չուտով կուսենանք և մի հեռագրական թիւ Ազ-
գութանը: Լուսնը որ Դուրսէն դուրս
նայում է չուտով և մի ոտաւորական գրասենեակի
ընդ մէջ: Դուրսէն այս տարի մեծ յոյս ունէիք
մեր այգիներին, որոնք ամբողջ տարին դառն ընդ-
առեցին: Դուրսէն ամսական 3-ին եկած
ստորիկ կարկուտը փայտեց մեր միակ ապրելու
միջոցը: Թողնելով մեզ դատարկաձեռն, խորին
տրտմութեան ու սուգի մէջ: Կարկուտը տեղե-
կեցւում էր 15 րոպէ և հատիկների մեծութիւնը
ընկողնի չափ էր: Խաղողի այգիները և մրգատու
ծառերը կարկուտը ոչ թէ միայն փայտեց ու
կարտեց, բայց և մերկացրեց: Բոլոր տերեւներից
և ոչնչացրեց այգիների մէջ բոլոր ցանքերը: Գոնէ
մի կողմից խոճաղ մեզ Աստուած. կարկուտը մեր
արտերին չը հասաւ: Արտերից փայտած են միայն
չառ քիչերը: Զը նայելով որ դարձ արտերը ար-
դէն հասած են և հնձելու ժամանակ է, սակայն
սիրտ չը կայ հնձելու:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են: «Ստորին ամբոխին
պատկանող գանձակերի չորս հոգի հայ երիտա-
սարդներ դիտարկութիւն ունենալով այս օրերս
ուսումնասիրութիւններ ընդունելու, յունիսի 8-ին
կատարվելու է սրանց ակումբի մասին խորհարար
քահանայ Բաբայանովի ձեռնարկը»:

Մեզ գրում են ԲԱՅԻՆԻՑ հետեւեալը: «Ես հա-
զարդեմ էի ձեզ արդէն, որ պարսկա-Մուրադի
երգերի խումբը անցեալ մայիս ամսի կէսին վեր-
ջին անգամ երգեց հայոց եկեղեցում: Երգերը ու-
թիւնը դադարեցրելով և մինչև սկսուեմք ամիսը,
իսկ սկսուեմք երգելու սկսած խումբը դիտարկութիւն
ունի ամեն կիրակի երգելու եկեղեցում: Եւրոպի-
ական ներգաղթական երգերի երգչուհիներն կի-
րակի օրերը հայոց եկեղեցին լի է լինում: Բայց
մոթեմք և խմբի լսելու համար մինչև անգամ
Աւ-Քաղաքից եկողներ են լինում: Երգերը ու-
թիւնը ժողովուրդը անտարակոյս շատ է գրաւ-
ւում: Դէպի եկեղեցին: Կարա-Մուրադ գիտէ լա-
կաւարել խումբը, հմուտ երաժիշտ է և ընդու-
նակ ուսուցիչ: Ես առիթ ունեցաւ տեսնել թէ
որքան պարտքը դիտէ հնչող և համալսելի կեր-
պով սովորեցնել երգչուհիներին: Բացի սրանից
նա հազարապետ մարդ է մեր մէջ և իր արտա-
կարգ եռանդի կողմից»:

«Արձագանք» շաբաթաթիւնը մի ամբողջ սի-
նակ է նուիրում տիկին Մարգարիտ Ալեքսանեանի
ձեռագիր աւետարանի նկարագրելուն, որ այս օ-
րերս դրված էր «Աղբիւր» խմբագրատանը և որ
այժմ պ. Տ. Ղազարեանի տիկինը ցանկանաւորու-

Անձամբ մէկին, որը ուսանողների միջամարտու-
թիւնից անցած տեղեկութիւն չունի, այս դէպքը
բոլորովին մի հանգիստ կերպով: Այդ ուսանողնե-
րի դասը մենամարտելը բազմաթիւութիւն է հա-
մարում, գլխաւորապէս մենամարտութիւնից մնա-
ցած վերջերը, որոնցով ուսանողը հպարտանում է
ուրիշների առաջ:

Մի քանի խօսքով յիշելով վերեւում գրաւոր-
ւած ընկերութիւնների մասին, առանց ընդարձա-
կորէն խօսելու անցանք: Այժմ դիմեց կրկին այս
խնդրին. գրաւորական ընկերութիւնների նպա-
տան է ընկերական ոգին անդամների մէջ պահ-
պանել և դրաց համար միջոց է ընտրված գրաւոր-
ականութիւնը, իսկ գրաւորականութեան էլ իր բուն կեր-
պանքը տալու համար գործ են դրվում
խմբիչները: Գլխաւորապէս գարեջուրը: Զը նայե-
լով ընկերութեան նպատակին հասնելու համար
ընտրված միջոցին, այնու ամենայնիւ, գտնում են
այստեղ միայն «մենք», մի հաւաքական անձնա-
ւորութիւն, որ իւրաքանչիւրի «ես»-ը միայն մի
մասն է կազմում և ստորադրվում «մենք» գաղա-
փարին: Հէջն այդ է պատճառը, որ այստեղ ըն-
կերական կապը անքակտելի է:

Այս ընկերութիւններն են ունեն իրանց կանո-
նադրութիւնները թէ գրաւորական և թէ ընկե-
րական զոյգութեան համար: Որովհետեւ իւրա-
քանչիւր ուսանողական ընկերութեանց կանոնա-
դրութիւնը (խօսքս վերջին տեսակի մասին է)
զրկւթէ միատեսակ բնաւորութիւն ունի, ուստի
թողնեմք այդ ու դիմեմք միայն գրաւորականին:
Նախ ընկերութիւնների անդամները բաժանվում
են դասակարգերի. առաջինն է *) ֆուքսերի
(Fuchs) գասակարգը, երկրորդը բուրշերի (**)

*) Ֆուքս նշանակում է աղուէս:
(**) Bursch խօսքի ծագումն է լատիներէն Burs-
խօսքից, որը նշանակում է կաշուէ քսակ, իսկ
Բուրշերական մտքով—գրաւորական ժողով:

Թեմա մտաւ արդէն էջմիածին, վանքի թան-
գարանին տիկին Ալեքսանեանի կողմից նուիրե-
լու նպատակով: «Արձագանք» ասում է որ յի-
շեալ ձեռագիրը աւետարանը գրուած է չորս տե-
սակ ձեռագրով, իւրաքանչիւր աւետարանի գը-
րուածը պէս պէս: Ամենաուրեք աչքը չէ կարող
այդ ձեռագիրը դանդաղեցնել տպագրութիւնը:
Աւետարանը գրուած է հինգ տարվայ ընթացքում:
Իւրաքանչիւր գրուած նկարված է մեծագիւր տառե-
րով, որոնք ներկայացնում են զանազան կենդա-
նիկներ և ձկներ: Իսկ գլուխներին միջի փոքր գլխա-
տառերը գրաւորված են նուրբանկար ծաղիկնե-
րով: Աւետարանի սկզբում նկարված են չորս ա-
ւետարանիչները, իսկ առաջին գլխից յետոյ նը-
կարված է Յիսուսը նաւի վրա, բայց այդ կայ
Եւրոպի քաղաքի գեղեցիկ պատկերը: Կան նոյն-
պէս և ուրիշ նկարներ աւետարանի բովանդակու-
թիւնից վերցրած: Աւետարանը գրուած է արծա-
թեայ ոսկեգոծ կաղնի մէջ, որի երկարութիւնն է
10 վերջով, իսկ լայնութիւնը 6 վերջով: Կաղնի-
որի վրա քանդակված են չորս աւետարանիչներ,
իսկ մէջ տեղում Մովսէսի պատկերը, չինված լի-
նելով Մովսէսի պատկերը, ինչպէս իր
այդ պատկերները կրում են ոչ թէ հայկական,
այլ առաւելան եկեղեցական ոճը: Գրաւորել տիկինը
կաղնի վրա ծախել է 700 րուբլի: Հաւատաց-
նում են որ տիկինը առաջարկելու են եղել ֆը-
րանսիացի և անգլիացի ճանապարհորդներ մինչև
10,000 րուբլի իր այդ ձեռագիր աւետարանի հա-
մար, բայց տիկին Ալեքսանեանց նախապատեց
նուիրել իր աշխատութիւնը էջմիածնի թանգարա-
նին:

Կիրակի, յունիսի 8-ին, կայացաւ ԹԻԹԻԼԻՍԻ
հայկաթօլիսիների նորոգված եկեղեցու հանդիսա-
ւոր օծումը: Առաւօտեան, պատարագից առաջ,
պատէր Թուանեանցի կարգադրութիւնը սկսվե-
ցաւ հանդէսը լատիներէն լեզուով: Հանդիսին ներ-
կայ էին տեղիս կաթօլիկ բոլոր կղերականները
և խումբ բազմութիւն, բացի տեղիս կաթօլիկաց
գլխաւոր հոգևորականի, հռովմէադաւան եկեղե-
ցիների վերաբնակ Օրթոլոսից, որ բացակայ
էր հիւանդութեան պատճառով: Հանդէսը կա-
տարվեցաւ փառաւոր կերպով, որից յետոյ
պատէր Թուանեանց վրացերէն լեզուով մի
քարոզ խօսեց, համառօտ կերպով բացատը-
րելով եկեղեցու նշանակութիւնը և ապա չը-
քեղ կերպով սկսվեց պատարագը: Պատարագին
մասնակցում էին տեղիս առաւել օպերայի մի քա-
նի երգիչներ և երգչուհիներ, և թատրոնական
օրկէստը: Մի այլ անգամ կը յայտնեք թէ ին-
չեց տոնված Թիֆլիսի լատին կղերականները

(Bursch): Բուրշ անուանում էին նախ Ֆրանկ-
ֆուրտի թագաւորական ձեռնարանի ռուսաւորներին,
սակայն այդ վերջինից զաւարտելով ժամանակի ազ-
դեցութեան տակ ընդհանրացաւ: Իւրաքանչիւր
ուսանող, որը գրաւորական ընկերութեան անդամ
է գրուած, միւրովում է և երկու կիսամեակ ֆուք-
սի գասակարգին պատկանելուց յետոյ, դառնում է
բուրշ: Ֆուքսերի միւրութիւնն այսպէս է տեղի
ունենում: Նախ ամբողջ ընկերութիւնը նոր ան-
դամի բացակայութեան ժամանակ, գտնում է մի
ծաղրական անուն, յետոյ նրան ներս հրաւիրելով,
նախագահը մի քանի խօսքով բացատրելով ընկե-
րութեան նպատակը և նկատելով նրան, որ հա-
ւատարիմ լինի, ընկերութեան օրէնքներին դէմ չը
գործի, տալիս է ծաղրական անունը, իսկ մօտը
կանգնած երկու կնքահայրերից մէկը գլխին է ա-
ծում երեք բաժակ գարեջուր, իսկ միւսին էլ նրա
բերանն է գցում մի կտոր շաքար մանանիկի
մէջ թափելով: Այն ժամից արդէն նա ստորա-
դրվում է իւրաքանչիւր բուրշի: Այդ վերջինը կա-
րող է ստանալ պատժել և խմելուց զրկել:

Բուրշերը միմիայն կարգապահութեան համար
ստորադրված են նախագահին, իսկ ֆուքսերի վրա
նրանց իշխանութիւնը անսահման է:

Խմելու օրէնքը սա է. եթէ մէկը միւսի կենացը
խմում է, վերջինը պէտք է 5 *) գարեջրի բուրշ
(Fünf Bierminuten) սպասելուց յետոյ առաջինի
կենացը խմի. հակառակ դէպքում միւսը կարող է
նրան պատժել, եթէ նա ֆուքս է, նրանից իւրե-
ւով գարեջուր խմելու իրաւունքը, իսկ եթէ բուրշ
է, նրան գարեջրի միջամարտութեան հրաւիրելով:
Մենամարտութիւնը հետեւեալ եղանակով է կա-
տարվում. երկու մենամարտողներն են ընտրու-
մ են սեկունդանտներ և մի անաչառ դատաւոր,
որն որ կառավարում է նոյա. նա առնում է 2

*) 5 գարեջրի բուրշ 2 1/2 րոպէ:

ձեռնարկեցին նորոգել այդ եկեղեցին, նրան նոր
ձեռ և նոր կերպարանք տալով և նորից նրան օ-
ծելով:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են: «Այսօր, յունիսի
6-ին, երեկոյեան դէմ, տեղիս «Շվեյցարիա» հիւ-
րանոցում անձնասպանութիւն գործեց լեվոլէրի
մի հարուածով: Թիֆլիսից եկած մի առաւել երիտա-
սարդ, Բ—սիկ ազգանունով: Անձնասպանութեան
պատճառը ճշգրտութեամբ յայտնի չէ, միայն լսվում
է որ երիտասարդը զգալի սիրոյ և աղքատութեան
գոհ է եղել: Անձնասպանը նամակներ է թողել իր
մօր և քրոյ վրա: Անձնասպանութեան մի ուրիշ
փորձ ևս պատահել էր մի երկու չաբաթ առաջ.
«Րօսիյսկի» ընկերութեան այստեղի գործակալու-
թեան մէջ մի ծառայող, որին ոստիկանութիւնը
մի ինչ որ պատճառով կամենում էր կալանաւո-
րել, լեվոլէրիով վիրաւորեց իրան կալանաւորու-
թեան միջոցին և այժմ ընկած է տեղիս զինուո-
րական հիւանդանոցում»:

ԲԱԹՈՒՄԻ մեր թղթակցից ստացանք հետեւեալ
լուրը: «Այս օրերս տեղիս հասաւ Բօսնիցի առե-
տրական տան կառավարի ներկայացուցիչը, որ
բանակցութեան համար հեռագրով հրաւիրել էր
Թիֆլիսից Անդրեյկովսկան երկաթուղու կառա-
վարիչ պ. Պրէսնիկովին: Այս օրերս էլ հասաւ
Բաթում և պ. Նօբէլը»:

Յորենի արտաճանութիւնը Բաթումից, ինչպէս
մեզ գրում են, շարունակվում է առաջվայ չափով,
չը նայելով որ գնները ցորենի վրա մասնաւորա-
պէս պակսած են: Բացի արտաճանութիւնը, ցորենը
այստեղից արտաճանվում է Օդէսսա և Կէրէ: Յո-
րենի բարձր տեսակը այժմ արժէ մինչև 1 ր. 3
կօպ., մանրահատիկ աշխարհացնող (օգիւնայ) ար-
ժէ 90 կօպ.: Մեծ քանակութեամբ այժմ ար-
տաճանվում է դէպի Օդէսսա Պարսկաստանի բը-
րինձը:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՍՏՐՈՒՆԳԱՐԻԱ

Աւստրիական լրագիրները լի են Ռուսարիայի
մայրաքաղաքում, Պեչուտով վերջին օրերս տեղի
ունեցած խառնակութիւնների և ցոյցերի մանրա-
մասն նկարագրութիւններով:

Յունիսի 5-ին (մայիսի 24-ին) տեղի ունեցաւ
մի մեծ չորթութիւն «Pester Lloyd» լրագրի

բաժանի ևս իր ձեռքը և ընտնում է, որը առել է
և որը պակաս. եթէ մէկը առել է, այն բաժակից
փոքր ինչ լսվում է և այդպիսով երկուսն էլ հա-
ւասարեցնում: Այս գործողութիւնը կատարվելուց
յետոյ դատաւորը տալիս է բաժակները միմա-
մարտողների ձեռքն ու սկսում է հետեւեալ ձեռով
կառավարել. դէնքերը առէք, միմեանց զարկեցէք
(բաժակներով), տարեք բերաններդ և, վերջապէս,
eins, zwei, drei (մէկ—երեք) բացականչելով եր-
կուսն էլ միաժամանակ խմում են և որն որ շուտ
է բաժակը դարձնում, նա յաղթող է հանդիսա-
նում:

Բարեբաղդաբար այդ 3-րդ և 4-րդ դասակար-
գերի ընկերութիւնները շատ սակաւաթիւ են:
Գլխաւորապէս միմեանցից իրանց ընկե-
րական *) գլխաւորի գոյնով և գիտնական ընկե-
րութիւնների անդամների հետ բուրժուական յարա-
բերութեան մէջ չեն մտնում: Գլխաւորապէս
հարուստ ընտանիքի երիտասարդներ են և մնում
են համալսարաններում գրեթէ 10 տարի, առանց
ապագայի մասին հոգս տանելու: Գլխաւորա-
պէս կենսաբան մարդուս մի տեսակ զոլուսն է
պատճառում. առաւօտեան արթնանում են ժամի
12-ին, ճաշից յետոյ երեւին փոքր ինչ գրասեն-
նի քաղաքի շրջակայքում, երեւին գտնում են իրանց
սիրուհիներին **) մօտ, որոնց սովորաբար շատ
(գանձ) են անուանում, իսկ երեկոյեան ընկերու-
թեան սենեակը գարեջուր խմելու: Գլխաւորից չա-
տերը մինչև անգամ իրանց մասնագիտութիւնից
դասախօսող պրօֆէսորների երեսն անգամ չեն
տեսնւ:

*) Շվեյցարիայում կան գիտնական ընկերու-
թիւններ, որոնք ևս զանազանվում են իրարից
գլխաւորի գոյնով:

**) Միայն ոչ ընկերութեան գլխաւորի, հակա-
ռակ դէպքում ընկերութիւնը կը պատժէ նոյա,
տուգանք դնելով նոյա վրա, կամ դուրս վաճառ-
ելով իրանց շրջանից:

խմազգրատան առջև: Այդ լրագիրը որ Ռուսարի-
այի միջխորհրդարանի օրդանն է, մի յօդուած
էր հրատարակել, որի բովանդակութիւնը բաւա-
կան վիրաւորիչ էր թէ աւստրիական կառավա-
րութեան և թէ զօրքի համար: Զօրուածը ահա-
գին աղմուկ հանեց: Եւ որպէս զի թեթեւնայ
այն սպաւորութիւնը որ գործեց յիշեալ յօդուա-
ծը Վիեննայի կառավարութեան վրա, լրագրի
խմազգիրը, Մակս Ֆալկ, իր ստորագրութեամբ հե-
տեւեալ նամակ տպագրեց լրագրի յաջորդ համար-
ներից միում:

«Մեր լրագրի յօդուածը, ինչպէս երևում է, վի-
րաւորել է թէ կառավարութեանը, թէ զօրքը և
թէ նոյն իսկ թագաւորական տունը: Բայց ով
հետեւել է մեր քառամեայ խմազգրական գործու-
նէութեանը, նա կը խոստովանվի, որ մեր ցան-
կութիւնից շատ հեռու էր որ և է կերպով վիրա-
ւորել թէ թագաւորական ցեղը, թէ կառավարու-
թիւնը և թէ զօրքը: Ինչ վերաբերվում է երջնե-
րցօք Արթէխին, մենք միշտ ամենախորին յար-
գանք ենք զգացել դէպի նա, ինչպէս և այն բո-
լոր անձինք, որոնք ճանաչում են երջնեցիները»:

Նամակի երկայուն պէս, շատերը այն համոզ-
մունքի են, որ նա գրված է Տիսսայի թեւա-
գրութեամբ, որ նոր էր վերադարձել Վիեննայից:
Միւս օրը «Pester-Lloyd» լրագրի խմազգրատան
առջև 600-ի չափ ուսանողներ հաւաքվեցին և
սարքեցին ի պատիւ խմազգրի «կատունների կօն-
ցերտ» մի և նոյն ժամանակ այրելով լրագրի այն
համարը, որի մէջ տպված էր խմազգրի ստորա-
գրութիւնը կրող և ներողութիւն խնդրող նա-
մակը:

Քաղաքում արդէն յարուցված աղմուկը ակելի
ստատկացաւ, երբ լուր տարածվեցաւ թէ գնե-
րալ Դանսիկի դալիս է Պեչուտով: Թէ և այդ լուրն ան-
միջապէս հերքվեցաւ, բայց այնու ամենայնիւ ան-
բոխի մի մեծ բազմութիւն, ուսանողների հետ
միացած ուղեւորվեց դէպի երկաթուղու կայարա-
նը, և այդտեղ հաւաստիացաւ թէ նշանակված
գնացքով Դանսիկ գնեցելով զաւրտեան մասին լուրերը
շարունակում էին յամաւորութեամբ տարածվել
ամբոխի մէջ, սաստկացնելով արդէն յարուցված
յուզմունքները: Եւ ահա քաղաքի մի քանի կէտե-
րի վրա ընդհարումներ եղան ամբոխի և ոստիկա-
նութեան մէջ:

Զուգումեք առաւել ևս ստատկացաւ երբ պա-
տահած ընդհարումների մասին լուրեր տարածվե-
ցան: Երբ ամբոխի և ոստիկանութեան մէջ պա-
տահած կռիւների թիւը շատացաւ, վարչութիւնը
հրամայեց ժանդարմներին և զօրքին օգնութիւն
հասցնել ոստիկանութեանը:

Գերմանական ուսանողն ոստիկանութեան իշ-
խանութեան տակ չէ գտնվում. ուսանողներն
ունեն իրանց համար դատարան, դատաւոր և
բանտ, ոստիկանը միայն իր ծառայութիւնն է մա-
տուցանում համալսարանական դատարանին: Գլխ-
աւորով պատժի արժանի ուսանողներ: Բանտ առե-
լով, յարգելի ընթերցող, ինկվիլիցիայի արգելա-
նոցների նման մի բան չը կարծես, այլ գուցէ քո
քնակարանից ակելի լաւ քնակարան. այստեղ չէս
գանիլ խոտից չինած անկողին, այլ ինչպէս որ
ուսանողը իր տանն ունի: Կերակուրը չէ ցամաք
հաց և ջուր, այլ ուսանողի պատուէրով, որ պան-
դոկից ուղես կարող են ստանալ: Ընկերովը այցե-
լիսն ներս չեն մտնում զինուորներով, այլ բան-
տի դուռը բաց է, երբ ուղես կարող են ընկե-
րովը այցելել: Եւ մինչև անգամ դէպքեր գիտեն,
որ բանտարկուած ուսանողը իր բարեկամին իր
մօտ ճաշելու է հրաւիրել: Ահա քեզ ուսանողական
բանտը:

Խօսելով ուսանողական կենքի մասին, տես-
նեմք այժմ թէ պրօֆէսորն ինչ դեր է խաղում
ուսանողների մէջ. նա ոչ թէ ուսանողին մտաւոր
զարգացում է տալիս, այլ և բարոյական, երևա-
լով նրա շրջանների մէջ, նրա հետ գրաւորաճանա-
րով: Փանի պրօֆէսորներ գիտեն, որոնք ուսանո-
ղական ընկերութիւնների անդամ են և նոյն իսկ
յաճախ դասախօսութիւններ են կարդում ընկե-
րութիւնների մէջ: Ուսանողները հրաւիրվում են
յաճախ պրօֆէսորների տունը ճաշելու, ընթերի-
ւ և այլն և այլն:

Վերջացնելով յօդուածս եւրոպական ուսանո-
ղութեան մասին, չը մոռանամ յիշել, որ օգուտ
եմ քաղել ուսանողական «Stammbuch» անուան-
ված գրքից:

Հայացիք:

Ուսանող

